

մասկոսի կուսակալութեան մէջն են նաև Արուսաղէմ, Ռեթղէհէմ, Պազարէթ, Ամարիա, Տիբերիա և Պալմիրայի աւերակները որ Աղոմն շինածէ կ'ըսեն, և հռովմէական կայսրութեամանակ մեծահարուստ քաղաք էր :

Ասորեստան ոչ երեկք բոլորովին Տաճկի տէրութե տակն եղաւ : Տիւրզիք և Արաբացիք յամառութք իրենց անկախութիւնը պաշտպանեցին . 1832ին ՈՒՀԿ մէմիտ Ալի այս ապստամբներս հնազանդեցնելու պատրուակաւ, Դրան հրամանաւը հօն Խգիպտացի զօրաց բազմաթիւ բանակ մը իսաւրեց . բայց ՈՒՀԿ մէմիտ Ալի, ինչպէս որ Խգիպտոսը Տաճկի տէրութեան անուամբը կառավարեմ ըսելով՝ ինքզինքը բացարձակ տէր հրատարակեց Խգիպտոսի, այսպէս ալ նաև Ասորեստանը իրեն սեպհականեց . բայց 1838ին Տաճկի տէրութիւնը տեսնելով որ բնաւ ինքը ոչ բողքոյ և ոչ ալ սպառնալեաց մտիկ կ'ընել, բանակ մը զօրաց և պղտի նաւատորմիղ մը ՈՒՀԿ մէմիտ Ալիին գէմիատարեց . զօրքերը յաղթուեցան, նաւատորմիղն ալ ծովակալին մատնութեամբը անձնատուր եղաւ . այսպիսի աղիտից մէջ Տաճկաստան եւրոպական տէրութեանց դիմեց, և Ինգղոյ, Առուսաց, Աստրիոյ և Բրուսիոյ օգնելովը կորսնցուցած երկիրները նորէն ստացաւ :

Դամասկոս քաղաքը :

Դամասկոս, որ հիմա ամենուն բերանը ցաւօք կը յիշուի, Ասորեստանի Երեւելի, հին և առաջին կարգի հետաքրննական քաղաքներէն մէկն է : Արգաւանդաշնորհ դաշտավայրի մը կեղրոնը, անթիւ վազուկ ջրերով, հակալիբանանու և ՈՒԵԾ Ինապատին վերջին ծայրերը կ'իյնայ, 80 հազարամէջը ծովին հեռու :

Դամասկոսի հիմնադիր Աբրահամ նահապետը կը սեպուի, կամ առջի դարու նահապետներէն մէկը . իրեն պատմական անցքերուն գալով՝ մինչեւ Դաւթի թագաւորութիւնը որոշ բան մը

չենք գիտեր . աս միայն յայտնի է որ Դաւթիթ իր թագաւորութեան կէսերուն՝ բոլոր քաղքին տիրապետեց : Խակղադդիաղասարը Ասորետոց թագաւորը, Դարայելացւոց ձեռքէն յափշտակեց և բնակիչքը ՈՒիջագետք խաւրեց . անկէ ինչուան Արաբացւոց ծագումը՝ Դամասկոս ալ Ասորեստանի մէկալ քաղաքներուն նման, երբեմն Պարսից, երբեմն Հունաց, երբեմն Հռոմայեցւոց և երբեմն ալ Արեւելեան կայսերաց իշխանութեան տակ մտաւ . 633ին Արաբացիք, որոնց հրամանատարն էր երևելին Դալէտ, երկայն պաշարմունքով առին զԴամասկոս . քաղաքը պաշտպանողն էր Խառվմաս անունով յոյն մը, որ իր արիասիրտ Ճգամբը շատ մեծ անուն թռղուց ապագայից առջեւ : Ուժերորդ, իններորդ և տասներորդ դարերուն՝ Դամասկոսի հետզէտէ նոր տէրեր և առաջնորդներ ունեցաւ : 1248ին Խաչակիրք Առղովիկոս է Դաղղիոյ թագաւորին, և Դանրատոս Դերմանիոյ կայսեր, և ուրիշ քրիստոնեայ ասպետաց առաջնորդութեամբը երբ քաղքին տիրելու մօտ էին, յանկարծ Հալէպի և Ո՛սուլի իշխանները մեծազօր պատրաստութեամբ օգնութեան հասանքաղքին, որով քրիստոնեայք պաշարմունքնին թողլով ետ քաշուելու հարկադրուեցան : Առով մնաց դարձեալ Արաբացւոց ձեռքը, ու անկէ քանի մը տարիէն անցաւ Խգիպտոսի սուլդաններուն, որոնք ինչուան Խաթարաց էնկթիմուր թագաւորին ըրած ահեղ արշաւանաց ժամանակը ձեռքերնին պահեցին :

Այս երեւելի աշխարհակալը բոլոր Հնդկաստանը նուածելին ետև յարձակեցաւ Ասորեստանի վրայ, և 1400ին Դամասկոսին իշխելով բոլոր քաղաքը հիմնայատակ կործանեց . բնակիչքն ալ բոլոր թրէ անցուց, և միայն մէկ աղգատոհմի խնայեց, նոյն տանը գլխաւորին Ալիին համար գերեզման մը շինել տուած ըլլալուն պատճառաւ . ինայեց նաև քանի մը ճարտարարուեստ հիւներու և Ոմըրղանտ տարաւ :

Ա էնկթիմուր Դամասկոսէն ելլելով Պաղտատու վրայ վազեց, որով Պաղտատ ալ Դամասկոսէն ոչինչ նուազ թշուառ բաղդ մը ունեցաւ. վերջը Տաճկաց հետ սկսաւ կռուիլ, և 1402^ն Լանկիւրիի արիւնահեղ պատերազմին մէջ յաղթեց անոնց ու Պայազիաց գերի բռնեց, և առանց Ասորեստանը կարգի գնելու աշքը Արևելքի վերջին սահմանացը վրայ գարձուց և զօրաւոր բանակով մը Ծինաստան վազեց :

Դամասկոս երբ նորէն կամաց կամաց աւերակներէն սկսաւ գլուխը վեր առնել, Աէլիմ Ա Պայազիաց որդին 1516^ն Եզիպտոսն ընկՃելէն և Ա'եմ լիւքներուն զօրութիւնը փճացընելէն ետև Դամասկոսի ալ տիրեց : Աքասեան խալֆաներուն վերջինը՝ Ասորեստանն և անոր հետ իր տէրութեան մնացած մասերը Աէլիմին թողուց, և անոր փոխարէն միայն իմամ պատուանունը ժառանգեց Աէլիմէն, զոր փառաւոր հանդիսով Դամասկոս ժողվուած մահմետականաց առջև շնորհեց իրեն Աէլիմ, որով զինքը և իր յաջորդները ուրիշ մահմետական իշխաններէ աւելի փառաւորեց : Ինկէ ետև Դամասկոս Ասորեստանի սրբազան քաղաքը եղաւ ուր կը դիմէին միշտ մահմետականաց եռանդնուոները . նաև մինչև ցայսօր Դամասկոսի բնակիչքը մոլենախանն են իրենց կրօնքին մէջ, և քիչ տարի է որ օտարազգի գեսպանք հրաման ունեցան հոնքնակելու :

Դամասկոս քաղաքը գրեթէ 3 հազարամէզ երկայնութիւն ունի . երկու ժամամէտք է բոլոր շրջակայքը քալելու համար . ամուր շրջապատ պատնէշ մը ունի որն որ Աէլիմ Ան ժամանակները շինուած է, Արաբացոց շինած պարըսպին տեղւոյն վրայ՝ ու հիմա խեղճ վիճակի մէջ է : 18 գուռ ունի, որոնց իւրաքանչիւրն ալ սկահապան ունին . ասոնց մէջ ամենէն աւելի հետաքրքրականը Ա . Պօղոսի գուռն է : Դամբաները նեղ և գէշ կերպով շինուած են . բայց երկու կողմանէ սալայատակ մոյթեր շինուած են 'ի դիւրութիւն անցաւորաց .

տուները ընդհանրապէս հողաշէն կամ աղիւսակերտ են . արտաքուստ անպահոյժ տեսք մը ունին՝ բայց ներսէն վայել չազարդ են և հարուստ . ամէնքն ալ գրեթէ ջրի խաղեր կամ աղբիւրներ ունին :

Դամասկոս 60 մզկիթ կայ . մեծութեամբ և գեղեցկութեամբ առաջինն է Ո . Յովհ . Ակրտի ըսուած քրիստոնէից հին եկեղեցին, որն որ որ և իցէ մեծ վտանգի մը ժամանակ կը փակեն . ասիկայ քրիստոնէից կանգնած տաճարներուն մէջ ամենագեղեցիկներէն մէկն է, որ սքանչելի է իր գեղեցիկ համեմատութեամբը, շքեղ գմբէթին և պաճուճազարդ միաբանութան . համար : Ա ալիտ խալիֆան ճարտարութեամբ նորոգել տուաւ աս կրօնական յիշատակարանը, Տաճկաց հիմքէն թուականին 86 տարւոյն . ընդդէմարեւելեան սովորութեան գոները պղնձէ են :

Ա աշմետականք հին աւանդութեան մը համեմատ կը հաստատեն որ 'ի կատարածի աշխարհիս Ո . Յովհ . Ակրտահէ երկնքէն Դամասկոսի մեծ մզկիթը պիտի գայ . Քրիստոս ալ Արուսազեմայ Աօմէրի մզկիթը և Ա'էհէմմէտ Ա'քքէինը :

Քաղքին ուրիշ երևելի շէնքերն են Ա'եծ ժաղարը՝ որ միանգամայն կարաւաններուն իջևան է, ուր կրնան մինչև 1,500 ուղտ ճամբայ չելած հոն ժողվուիլ . կուսակալին պալատը, Ազատար և Աիւլէյման փաշոներու ըսուած խաները . բաց ասոնցմէ՝ քաղքին վաճառականները 31 խան ունին որ լայն և ընդարձակ շտեմարանք են համբարուց : Դամասկոսի մէջ 150 ժաֆէէն աւելի կայ, և բոլոր Արևելքի մէջ գեղեցկութեան կողմանէ առաջիններն են :

Դամասկոս ժողովատեղի է ուխտաւորաց՝ ուր շատ անգամ 40էն 50,000 հոգի կը հաւաքուին Խւրոպայի, Ասոյ Տաճկաստանի և Պարսկաստանի ամէն կողմերէն և միաբանութեամբ Ա'քքէ կ'երթան . աս նուիրական կարաւանները առանձին տեղ մը ունին քաղքին արևելեան կողմը, քրիստոնէից գերեզմանատունէն 500 մէզը հեռու .

նոյն տեղւոյն մօտ՝ Եկեղեցւոյ մը աւերակներ կան՝ որ ՚ի յիշատակ Ա. Պաղոսի դարձին շինուած է :

ԱՌԵ կարաւանէն զատ որ առմաղանի լմնալէն ետքը ճամբայ կ'ելլէ, ուրիշ երեք կարաւան ալ կոյ որ տարին երեք անդամ Պաղտատ կ'երթան + ամէն 15 օր մէյմը Հալէպ, և ամէն երեք ամիս մէյմը Պահիրէ :

Պամասկոս շինուած դաշոյնները ատեն մը շատ անուանի էին. Հիմա իրեն Ճարտարութեան ձեռագործներն են օճառ, բամբակէ և մետաքսէ դիսպակներ, ընչաղեղ, համէտ, տեսակ մը անկուածոյ ժապաւէն և ոսմիազեայ գործուածքները : Հոս կը դնենք Պամասկոսի արուեստական վիճակադրութիւնը .

750 Պամասկոսի շալծախող կրպակաւոք կան . 200 ժաշկինակի և նորելուկ բաներու . 98 ժապաւէնի . 70 գործատուն դիսպակներու վրայ զարդեր տըպելու կամ նկարելու համար . 185 գունաւորողք և թափիշք . 72 համէտ շինելու կրպակք . 78 ընչաղեղի գործատունք և 43 ալ ծխախոտի :

Պամասկոսի բնակիչքը ըստ լավաէի է 180,000, որոնց 130,000-ը ԱՌԱՀՄԵՏՈՒԱԿԱՆՔ են, 30,000 քրիստոնէայք, յոյնք և լատինք, և 20,000 Հրեայք :

Հերձուածող ՀՅՈՒՆՔ իրենց համար առանձին Եկեղեցի ունին, բայց ուղղափառք զուրկ են, որով ստիպեալ են իրենց կրօնական պաշտամունքը լատինաց ունեցած երեք մենաստաններուն մէջ կատարել՝ որոնցմէ մէկն է Արքութեան Արքութեանց, երկրորդը լազարեանց որ Հիսուսեանց յաջորդեցին, և Աղաքարուարացը : Հայերն ու Կոստիքունին իրենց առանձին Եկեղեցիները, և Հրեայք իրենց ժողովարանը : Պամասկոս համանուն կուսակալութեան առաջին աթոռն է, ուր որ կը նստի առաջին կարգի նույ մը . Հոս կը նստի նաև Կոստիքուայ յոյն պատրիարքը և 42 արքեպիսկոպոսութիւնք և Եպիսկոպոսութիւնք կախումն ունին իրմէ . ատեն մը Պամասկոսի կուսակալը ստիպեալ

էր գլուխ կենալ ԱՌԵՔՔԵ գացող ուխտաւորաց :

Պամասկոսի դաշտագետինները զարդարեալ են սքանչելի պարտէզներով, նարնջենիներով, լիմններով, կիտրոններով, և ուրիշ այլ և այլ ազգի ծառերով : Պարրատի գետը եօթն Ճիւղբաժնուած իր ականակիտ և անոյշ ջրերովը քաղաքն և պարտէզները կը թրջէ . ջուրը Ճարտարութեամբ ամէն տեղբաժնուած է, և քաղաքին առողջութեան պատճառ ըլլալէն զատ նաև զուարձութիւն է առ հասարակ քաղաքացեաց :

Լիբանան :

ԼԱՅՍ լեռս որ այնչափ նշանաւոր եղած է Ա. գրոց մէջ, ԼԱՅԵանց հետքաղդատելով, ըստ բարձրութեան քան զայն շատ ստորին է . որովհետև իրեն լերանց միջին բարձրութիւնը ութէն տասը հազար ոտք է՝ ծովուն երեսէն առնելով : Հերմոն՝ որ աս լերանց մէջ ամենէն բարձրն է, հազիւթէ 15,000 ոտք բարձրութիւն ունի :

Լիբանան ԱՌԻԾԵՐԿՐՈՎԱԿԱՆԻՆ ԵՂԵՐՔԷՆ սկսելով, Պէյրութի մօտերէն, կը տարածուի մինչև Աշորեստանի անպատճները, Պամասկոսի գեղեցիկ հովտէն անդին . կը բաժնուի 'ի Լիբանան և 'ի Հակալիբանան, և այն Հովիտն որ այս լերանց երկու գօտիները իրարմէ կը բաժնէ, կը կոչուի ըստ նախնի Հունաց Լելեսիւրիա : Լիբանան անուանի էր հին ատեն իր մայրերուն համար ալ որ Եղեինի տեսակ մըն է . բայց շինութեան փայտի նուազութեան պատճառաւ Լյաչակիրք, Լրաբացիք և Տաճիկք աս մայրերուն անտառները փճացուցին, անանկ որ այսօրուան օրս այն անուանի մայրերէն հազիւթէ տասը կամ տասուերկուք մը կլնան մնացած ըլլալ, որոնք թերեւս քիչ ատենէն անհետ ըլլան :

Լիբանան այնպիսի բարձրաւանդակ մըն է, որ խիստ զուարծալի դիրքեր ունի և մշակութեան խիստ յարսմար է .